ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8

<<ԳՀԱՊՁԲ-2019/16-21-ԵՊԲՀ>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

ք. Երևան **_24_ _հունիսի_ _2019թ._**

ժամը _16⁰⁰_

Մասնակցությամբ՝

Հանձնաժողովի նախագահ՝ **Լ. Դանիելյան (ԳՊ/ԳԱՊ)**
Հանձնաժողովի անդամներ՝ **Մ. Գրիգորյան (ԳՊ/ԳԱ)**
Ա. Հակոբյան (ԳՊ/ԳԱ)
Կ. Մկրտչյան (ԳՊ/ԲԱ)
Է. Միրոյան (ԳՊ/ԲԱ)
Հանձնաժողովի քարտուղար՝ **Ս. Մկրտչյան (ԳՊ/ՄՀՄ)**

1. Տեղեկատվություն մասնակիցների ներկայացրած հայտերի՝ պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի անհամապատասխանությունների շտկման մասին

1.1 «Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ –ին, «Խաչպար» ՍՊԸ-ին, «Մեդիտեք» ՍՊԸ-ին, «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ին, «Օնմեդ» ՍՊԸ-ին և «Մեդէքսպերտ» ՍՊԸ-ին 2019 թվականի հունիսի 19-ին ծանուցվել է որակավորման փաստաթղթերում առկա անհամապատասխանությունները մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկելու վերաբերյալ:

1.2 «Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ –ն, «Խաչպար» ՍՊԸ-ն, «Մեդիտեք» ՍՊԸ-ն, «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ն, «Օնմեդ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել են իրենց կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում առկա անհամապատասխանությունները հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան:

1.3 «Մեդէքսպերտ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է որպես շտկում փաստաթուղթ,որով չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը,այն է չի շտկվել «Կառավարման վահանակի քաշը, ոչ ավել, քան 0,8 կգ» հրավերով սահմանված պահանջը:

1.4 Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 48-րդ կետի դրույթներով **Թիվ 8-րդ** չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից հանդիսացող՝ «Մեդէքսպերտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել և որակավորման փաստաթղթերը ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

2. <<ԳՀԱՊՁԲ-2019/16-21-ԵՊԲՀ>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին

2.1 **<<ԳՀԱՊՁԲ-2019/16-21-ԵՊԲՀ>>** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը, մասնակիցների կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, հանձնաժողովի անդամների կողմից իրականացված հայտերի գնահատման արդյունքները, հանձնաժողովը որոշեց.

- <<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամի կարիքների համար բժշկական սարքավորումների և գործիքների ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակիցներ ճանաչել՝

- **N** 1 չափաբաժնի մասով << **Մեդիտեք** >> ՍՊԸ-ին.

- **N** 2, 4, 12, չափաբաժինների մասով << **ԹԱԳ ՀԷՄ**>> **ՍՊԸ**-ին.
- **N** 5 չափաբաժնի մասով << **Մեդտեխսերվիս** >> **ՍՊԸ-ին.**
- **N** 6, չափաբաժնի մասով << **Օնմեդ** >> **ՍՊԸ**-ին.
- **N** 7, 9, 10, 13, 15, 16 չափաբաժինների մասով << **Խաչպար** >> **ՍՊԸ**-ին.
- **N** 11, 14 չափաբաժինների մասով << **Ար.Մեդտեխնիկա** >> **ՍՊԸ**-ին.

● <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝ թիվ 1, 2, 4, 5, 6, 7, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16 չափաբաժինների մասով հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և սահմանել անգործության ժամկետ:

● Անգործության ժամկետի ավարտին հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել ընտրված մասնակցներին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

3. <<ԳՀԱՊՁԲ-2019/16-21-ԵՊԲՀ>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի թիվ 8-րդ չափաբաժնի մասով գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից կատարվելիք գործողությունների մասին

Ղեկավարվելով <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթներով՝ հանձնաժողովը որոշեց.

- Ծանուցել թիվ 8 չափաբաժնի մասով հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակից՝ «Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ-ին ,առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում, ներկայացնել հրավերի 2-րդ մասի՝ հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

4. Հանձնաժողովի նիստին ներկա անդամների և քարտուղարի անուն-ազգանունները և ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ՝ _____ **Լ.Դանիելյան**
(ստորագրությունը)

Հանձնաժողովի անդամներ՝ _____ **Ա.Հակոբյան**
(ստորագրությունը)

_____ **Կ.Մկրտչյան**
(ստորագրությունը)

_____ **Մ.Գրիգորյան**
(ստորագրությունը)

_____ **Է.Միրոյան**
(ստորագրությունը)

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ **Ս. Մկրտչյան**
(ստորագրությունը)